ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ք. Էջմիածին 21 մարտի 2024թ.
ժամը 11:15-ին

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ Կառավարության 19.11.2014 թվականի թիվ 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով, 2024 թվականի մարտի 21-ին՝ ժամը 11-ին, Վաղարշապատի համայնքապետարանի «Մակար Եկմալյանի անվան թիվ 1 երաշժտական դպրոց» ՀՈԱԿ-ի շենքում կայացավ Վաղարշապատի Մ. Մաշտոցի անվան թիվ 1 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի կողմից Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, **Բաղրամյան փողոցի թիվ 12 հասցեում նախատեսվող դպրոցի կառուցման նախագծային փաստաթղթերի վերաբերյալ** հանրային քննարկման շրջանակում /1-ին փուլ/՝ */Վաղարշապատ համայնք, Բաղրամյան փողոց թիվ 12, տնօրեն՝ Լիլիթ Պետրոսյան/ :*

Ելույթներ.

Մ.Պողոսյան - Բացման խոսքով հանդես եկավ Վաղարշապատ համայնքի ղեկավարի խորհրդական Մարիամ Պողոսյանը: Ողջունելով ներկաներին, Մ.Պողոսյանը նշեց, որ հանրային քննարկման մասին հանրության լայն շերտի տեղեկացվածությունն ապահովելու համար համայնքապետարանը ձեռնարկել է օրենքով սահմանված բոլոր միջոցները: Մասնավորապես՝ հանրային քննարկման մասին ամբողջական տեղեկատվությունը տեղադրվել է համայնքային կառավարման տեղեկատվական բոլոր հարթակներում, տպագրվել է թերթում, հայտարարությունը փակցվել է հայտարարությունների համար առանձնցված հատվածներում: Հաշվի առնելով աշխատանքային ժամը, նաև հնարավորություն է տրվել առաջարկություններ և/կամ առարկություններ ներկայացնել համայնքապետարան՝ էլեկտրոնային կամ առձեռն եղանակով: Մ.Պողոսյանը հավելեց, որ էլեկտրոնային կամ առձեռն եղանակով առաջարկություններ կամ առարկություններ չեն ստացվել:

«Համայնքապետարան ներկայացված նախագծային փաստաթղթերի համաձայն նախատեսվում է կառուցել 1 ստորգետնյա և 3 վերգետնյա հարկերով դպրոց, քանդելով վկայականում առկա բոլոր շինությունները: Նախագիծը ներկայացնելու համար խոսքը տրվում է նախագծային ընկերության տնօրեն Վլադիմիր Իսպիրյանին»,- Մ.Պողոսյան:

Վ. Իսպիրյան – Գոյություն ունեցող դպրոցը ենթարկվել է տեխնիկական իրավիճակի ուսումնասիրության: 6 մասնաշենքերից միայն 2-ը վթարային չեն: Նախարարության հետ քննարկումներում որոշվեց, որ գոյություն ունեցող շինությունները պահելը նպատակահարմար չեն: Հաշվի առնելով տարածքի/ հողամասի փոքր լինելը, դպրցը կառուցվելու է 3 վերգետնյա հարկերով, որպեսզի ապահովվի անհրաժեշտ քանակի դասասենյակները: Նկուղային հարկում նախատեսված է հրաձգարան, գրադարան,

ապաստարան՝ անհրաժեշտ բոլոր համակարգերով՝ օդափոխություն, հովացում և այլն: Ունենք հանդիսությունների դահլիճ, խոհանոց, ճաշարան, մարզասրահ, հնարավորության դեպքում տանիքում կնախատեսվի նաև ֆուտբոլի դաշտ, սակայն այս պահին դեռ քննարկման փուլում է: Պարզապես տարածքի փոքր լինելը թույլ չի տալիս դրսում ունենալ ֆուտբոլի դաշտ: Սպորտդահլիճը և հանդիսությունների դահլիճը կունենան հովացման և օդափոխության համակարգեր: Բոլոր դասասենյակները կունենան օդափոխության և ջեռուցման համակարգ: Առհասարակ շինությունը ապահովված է լինելու քաղաքաշինական նորմերին համապատասխան բոլոր համակարգերով: Նախատեսված են համակարգչային, կենսաբանության, քիմիայի լաբորատորիաներ: Շենքը հարմարեցված և հասանելի է լինելու հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Հարց ու պատասխանի ընթացքում հնչեցին հետևյալ հարցերը.

Լիլիթ Պետրոսյան – Դպրոցի տնօրեն Լ. Պետրոսյանը նկատեց, որ նախագծում բացակայում է ներառական կրթության համար նախատեսված դասասենյակ, որտեղ ուսուցչի օգնականը պետք է պարապմունքներ անցկացնի, հատուկ դիդակտիկ նյութերի օգնությամբ աշխատի ԿԱՊԿՈՒ սաների հետ:

«Այս պայմանները պետք է ստեղծվեն ԿԱՊԿՈՒ աշակերտների համար, որպեսզի նաև հոգեբանը կարողանա աշխատել: Նախնական քննարկման ժամանակ այս հարցը ես բարձրացրել էի»:

Վ. Իսպիրյան – Այո, նախագծով նման աշխատասենյակ նախատեսված չէ: Նախարարության հետ կքննարկենք ձեր առաջարկը:

Լիլիթ Պետրոսյան – Նախագծով նաև ներառված է լաբորատոր նյութերի և գույքի ձեռքբերում, սակայն մենք դրանք ստացել ենք նախարարությունից: Ի՞նչ ենք անելու այս դեպքում:

Վ. Իսպիրյան – Եթե նախարարությունից դուք ստացել եք նյութերը, ապա նախագծով դրանք այլևս չպետք է ներառվեն: Այս հարցը ևս կքննարկենք նախարարության հետ:

Վ.Դավթյան – Վաղարշապատի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի տեղակալ Վասպուրական Դավթյանի առաջին հարցը էներգոարդյունավետության ապահովման համար նախատեսված միջոցառումների վերաբերյալ էր:

Վ. Իսպիրյան – Ճարտարապետն ընդգծեց, որ թե պատերը, թե տանիքը ջրմամեկուսացված են լինելու՝ համապատասխան շինարարական նորմերին: Ջեռուցման համակարգերը ևս նախատեսված են արդի լուծումներով:

Վ.Դավթյան – Շինության տանիքը հարթ է նախատեսված թե՞ լանջավոր:

Վ. Իսպիրյան – Տանիքը հարթ է լինելու, այս հատվածը ծառայելու է նաև տեխնիկական համակարգերի համար: Իսկ մի հատվածը, ինչպես արդեն նշեցի, կծառայի որպես ֆուտբոլի բացօթյա դաշտ՝ ցանկապատով:

Վ.Դավթյան – Հաջորդ հարցս շինարարության ընթացքում տրանսպորտային մուտքերի վերաբերյալ է: Բաղրամյան փողոցը և մայթերը նոր հինանորոգված են: Պետք է հաշվի առնել այս հանգամանքը և շինտեխնիկայի մուտքերը այդ հատվածով չնախատեսել: Նաև ուզում եմ նշել, որ հատող՝ Թումանյան փողոցը միակողմանի է:

Վ. Իսպիրյան – Այս հարցը անպայման կհամաձայնեցվի ՏԻՄ-ի հետ:

Ա. Մինասյան – «Էկո մենեջմենթ» ՍՊ ընկերության տնօրեն Արթուր Մինասյանը նշեց, որ նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտը մշակվել է իրենց ընկերության կողմից: Այս հանրային լսման ավարտից հետո, երբ արձանագրությունը ներկայացվի ավագանուն և համայնքըվերջնական դիրքորոշումը տա, բոլոր պահանջվող փաստաթղթերը փաթեթով կներկայացվի Շրջակա միջավայրի նախարարություն և կկազմակերպվի հետագա գործընթացը: Հայտում կներառվեն բոլոր միջոցառումները շինարարության փուլում շրջակա միջավայրի վրա ազդեցության մեղմման համար, շինարարությունը կկազմակերպվի շինկազմակերպման նախագծին համապատասխան՝ նախատեսված պահանջվող բոլոր պայմանների պահպանմամբ: Նախարարության դիտողություններ հիման վրա, եթե այդպիսիք լինեն, նախնական գնահատման հայտը կլրամշակվի, ապա կկայանա հանրային 2-րդ լսումը, որին կմասնակցի նաև նախարարության ներկայացուցիչը:

Վ.Դավթյան – Տարածքում կան ծառեր, որոնք նախատեսվում է հատել:

Վ. Իսպիրյան – Կան ծառեր, որ ենթակա են հատման, քանի որ այդ հատվածում նախատեսված է կառուցել 3-րդ մասնաշենքը: Ցանկանում եմ նշել, որ եթե լինեն ծառեր, որոնք հնարավոր կլինի վերատնկել՝ կտեղափոխվեն և կվերատնկվեն:

Հարցերի բացակայության հիմքով հանրային լսումն ավարտվեց:

Որոշում.

Որոշվեց հանրային լսման արձանագրությունը ներկայացնել համայնքի ավագանուն:

Հանրային լսման նախաձեռնող՝

«Օն դիզայն» ՍՊԸ տնօրեն Վ.Իսպիրյան _____

Արձանագրող՝ Մ.Պողոսյան _____

«Էկո մենեջմենթ» ՍՊ ընկերության տնօրեն

Արթուր Մինասյան _____